ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոգիա» (4 դասաժամ, տղաների խումբ) և «Ֆիզկուլտուրա» (23 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ(դիպլոմ)
- անձը հաստատողփաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածներից կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու ւանձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մայիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան մայիսի 5-ին ժամը 15:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս, Խ.Աբովյան 6:

Տեղեկություններիհամարզանգահարել՝ (093)24-94-00հեռախոսահամարով: